

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Գյուղատնտեսական արտադրանքի իրացումն ըստ ուղղվածության
0.2	Ոլորտը	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժին Բաժնի պետ Արսեն Ավագյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 52 44 49, +374 11 56 46 72 Էլ. փոստ՝ arsav@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն գյուղատնտեսական արտադրանքի՝ ըստ ուղղությունների, իրացման վերաբերյալ: Ցուցանիշի հաշվառումը վարվում է 20-րդ դարի 90-ական թվականների կեսերից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: Գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացման՝ ըստ ուղղությունների վերաբերյալ ցուցանիշները կիրառվում են գյուղատնտեսության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես

		միջավայրի վերլուծության, գյուղատնտեսության ենթակառուցվածքների փոփոխությունների միտումների բացահայտման, պարենային հաշվեկշռի կազմման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 12090 գյուղացիական տնտեսություններից հարցաթերթի միջոցով տարեկան պարբերականությամբ հավաքվող տեղեկություններն են:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	Գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումն ըստ ուղղությունների նրանց կողմից տվյալ տարում արտադրված և նախորդ տարվանից մնացորդ արտադրանքի օգտագործումն է ըստ հետևյալ ուղղությունների՝ վաճառված, ապրանքափոխանակման դիմաց տրված, վարձու աշխատանքի և այլ ծառայությունների դիմաց բնամթերքով տրված, տնտեսությունում օգտագործված, այդ թվում՝ վերամշակված, ինչպես նաև մնացորդն է տնտեսությունում:
1.2	Վիճակագրական հասկացություններ	Հիմնական հասկացություններ Մնացորդը նախորդ տարվանից՝ նախորդ տարում գյուղացիական տնտեսությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի մնացորդային ծավալն է: Ընթացիկ տարում արտադրված գյուղատնտեսական արտադրանքը գյուղացիական տնտեսությունում

		<p>արտադրված հիմնական բուսաբուծական՝ հացահատիկ, կարտոֆիլ, պտուղ, խաղող, բանջարեղեն, բոստան, ու անասնաբուծական՝ միս, կաթ, ձու, բուրդ և այլ արտադրանքի ծավալն է:</p> <p>Վաճառված գյուղատնտեսական արտադրանքն անմիջապես տնտեսությունում, շուկայում, ճանապարհին և այլուր ցանկացած ուղղությամբ (կազմակերպություն, ֆիրմա, անհատ և այլն) կանխիկ դրամով կամ անկանխիկ վաճառված գյուղատնտեսական արտադրանքի ծավալն է:</p> <p>Ապրանքափոխանակման դիմաց տրված գյուղատնտեսական արտադրանք նյութական ռեսուրսների (վառելանյութեր, պարարտանյութեր և այլն) և արդյունաբերական ապրանքների ձեռք բերման դիմաց տրված, տնտեսությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի ծավալն է (այստեղ անհրաժեշտ է ներառել նաև ապրանքափոխանակման միջոցով այլ գյուղարտադրանքների ձեռք բերումը):</p> <p>Վարձու աշխատանքի և այլ ծառայությունների դիմաց բնամթերքով տրված գյուղատնտեսական արտադրանքը բոլոր տեսակի ծառայությունների դիմաց տնտեսությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքով վճարվածի ծավալը:</p> <p>Տնտեսությունում օգտագործված գյուղատնտեսական արտադրանքը տնտեսությունում օգտագործված, ինչպես նաև հարազատներին, ծանոթներին, ընկերներին, հարևաններին և այլոց, օգնության կարգով տրված, բարեգործական նպատակներով օգտագործված գյուղատնտեսական արտադրանքի և հումքի քանակությունն է:</p> <p>Վերամշակված գյուղատնտեսական արտադրանքը տնտեսությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման համար (ցորենից՝ ալյուր, պտուղներից և խաղողից՝ գինի և օղի, բանջարեղենից՝ պահածոներ, մսից՝ երշիկեղեն և այլն, կաթից՝ պանիր,</p>
--	--	---

		<p>կարագ և այլն) օգտագործված ծավալը:</p> <p>Մնացորդը տնտեսությունում տարեվերջին դա տնտեսությունում արտադրված տվյալ գյուղատնտեսական արտադրանքից, տարվա վերջին տնտեսության մնացորդային ծավալն է (վերամշակվածի դեպքում՝ սկզբնական քաշով):</p> <p>Ճյուղային ընդգրկունություն</p> <p>Վիճակագրական դիտարկումները ներառում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2)՝ գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն (բաժին A) գործունեության տեսակները:</p> <p>Աշխարհագրական ընդգրկունություն</p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը:</p> <p>Հրապարակման խմբավորումներ</p> <p>Տվյալները հրապարակվում են ըստ գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակների:</p>
<p>2. Ժամանակայնություն</p>		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 2-րդ եռամսյակում (ապրիլ ամսին):
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան
<p>3 .Ճշգրտություն</p>		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:</p> <p>Տեղեկատվությունը տրամադրում են գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 12090 գյուղացիական տնտեսությունները:</p>

		Ստացված տեղեկատվությունն ամփոփվում է մարզային կտրվածքով: Պատասխանների մակարդակը մոտ 98% է:
3.2	Անճշտության աղբյուրները	Տեղեկատվությունը հավաքվում է ընտրանքային, տարեկան պարբերականությամբ:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ներկայացված տվյալների ճշգրտության ստուգումներն իրականացվում են յուրաքանչյուր արտադրանքի գծով նախորդ տարիների համապատասխան ցուցանիշների հետ, համեմատման միջոցով:
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ. ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998-2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄԱԿ): Սկսած 2002թ. ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված ԵՄ վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE հիման վրա): 2010թ. կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա է համադրելիություն այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության (օրինակ՝ Ձև թիվ 29-ԳՏՀ (տարեկան) «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» վիճակագրական ամփոփ հաշվետվություններ,, գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 12090 գյուղացիական տնտեսություններից այլ հարցաթերթերով հավաքված տեղեկատվություն) հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:
5 .Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	Հրապարակումներ Տարեկան հրապարակումներ «Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից»

		<p>վիճակագրական տեղեկագիր (հայերեն, անգլերեն):</p> <p>Տվյալների բազաներ</p> <p>http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Ինտերնետային հասցե</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն, անգլերեն (ամբողջական) և ռուսերեն, հետևյալ հասցեով.</p> <p>http://www.armstat.am/am/?nid=82</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Ռեսպոնդենտներից հավաքվող հարցաթերթերը պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Փաստաթղթավորում	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373 :
5.4	Այլ տեղեկատվություն	
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: